

ԲԱՆԴԱՏՈՒՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶԵՍՏԵՐԻՑ
(Շալակատի՝ Բեռնակիր. թե՞ Բանկիր)

ՀԳԱ թղթակից անդամ Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

IX դարի երկրորդ կեսից Բյուզանդական կայսրությունը սկսեց Արարական խալիֆայությունից աստիճանաբար վերանվաճել դեռևս VII դարից կորցրած տարածքները, այդ թվում Հայաստանի բազում քաղաքներ ու շրջաններ։ Այսպես, 932-ին զրավեց Երրորդ Հալեի մայրաքաղաք Մելիտենեն, 943-ին՝ Կարինը, 1000 թ.՝ Տայքը, 1021-ին՝ Վասպուրականը, 1045-ին՝ Շիրակը և բազմաթիվ այլ շրջաններ։ Կայսրության տիրապետության հաստատմամբ սկսեցին Հայաստան մուտք գործել բյուզանդական կարգն ու կանոնը, վարչական, ֆինանսական ու հարկային սխեմաներ։ Վերջինս կայսրության համար ամենակարևորներից էր, քանզի, ինչպես գրում էր XI—XII դդ. սուհմանադլիսին ապրած արաբ զինական Մարվազին, Բյուզանդական կայսրության հիմնական եկամուտները հարկերի գանձումից էին գոյանում¹։ Բնական է, սխեմամանակ Հայաստան մուտք էր գործում նաև բյուզանդական հարկային տերմինաբանությունը՝ «բնագրով» կամ հայերեն թարգմանված, Այս վերջինի վերաբերյալ պատմական աղբյուրներից շատ վկայություններ չունենք։ Մի քանիսը պահպանվել են Հայաստանի և Իբերիայի բանակավիճի կատապաններ Ահարոն Բուլղարի և Բագարատ Վիսկայոս² բանակավիճի մայրաքաղաք Անիի Մայր տաճարի պատին 1056 և 1060 թթ. փորտպրված երկու ընդարձակ վիմագիր արձանագրություններում։ Այդ արձանագրությունները տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերություններն ուսումնասիրողին կարևոր նյութ են մատակարարում։

Ահարոն Բուլղարի արձանագրության մեջ հունարեն «բնագրով» է հիշված «պախա»-ը (հունարեն՝ *πάχυν-πένχυν*՝ հարկ, տուրք), որ գանձվում էր «տներին» (արձանագրության մեջ՝ «պախտ տանց»), այսինքն Անի քաղաքի կողպակներին, պանդոկներին՝ առևտրականների ու արհեստավորներին³։ Այն համապատասխանում է բյուզանդական *ἐνδοκοιτην*-ին որում *ἐνδοκοιτην* բառն առկա է⁴։ Այդ «պախտ տանց»-ը չէր տարի անց, Բագարատ Վիսկայոս արձանագրության մեջ «հայացվել» է, դառնալով «տանուտրութիւն» (տուրք տներին)։

Հստակաբան «բնագրով» և զուտ բյուզանդական իմաստով բերված է նաև «լիտր» բառը, որը հաճախ է հանդիպում հայկական աղբյուրներում XI դարից շատ առաջ, բայց տարբեր իմաստներով։ Անանիա Շիրակացու մոտ հիշվում է, ե այն իմաստով, ինչ Ահարոն Մագիստրոսի արձանագրության

¹ V. Minorsky. Marwazi on the Byzantines, Mélanges H. Gregoire. T. II, 1950, p. 462.

² Հ. Բարթիկյան. Ահարոն Մագիստրոսի արձանագրության մեջ հիշատակված հարկերի մասին. «Պատմա-բանասիրական հանգես», 1959, № 4, էջ 168—173.

³ Р. М. Бартикян. «Эникион» в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества.—Историко-филологический журнал, 1968, № 2, 117—128.

⁴ Նույն տեղում։

մեջ. «Եւ մանր բաժանեալ զլիտրն՝ լինի... դահեկան 72»⁵ այսինքն՝ 72՝ ոսկեդրամ: Այդ իմաստով էլ գործածված է լիտր բառը Ահարոն Մազիս-տրոսի 1056 թ. արձանագրության մեջ:

Վերջապես, հունարեն χρυσόβολον-ը (բառացի նշանակում է «ոսկե բուլլա»՝ դրոշմ, որ բացի իր ուղղակի իմաստից, նշանակում է նաև կայսերական թուղթ, գրություն, քանզի նրանից կախված էր լինում հիշյալ «բուլլան»): Ահարոն Բուլղարի արձանագրության մեջ բառը թարգմանված է «ոսկե մատանի»:

Ահարոն Մազիստրոսի և Բագարատ Վիկացու արձանագրությունների բովանդակությունը մեծ մասամբ վերաբերում է Անի քաղաքի առևտրականներից ու արհեստավորներից գանձվող հարկերին: Հենց այդ առնչությամբ Բագարատի արձանագրության մեջ հանդիպում է մի տեղում, որի իմաստը, մեր կարծիքով, մինչև օրս ճիշտ չի մեկնաբանված: Խոսքը «շալակաւոր» բառին է վերաբերում: Արձանագրության մեջ գրված է. «Եւ շալակաւոր Անեցի բամէնցավ բաժին (այսինքն՝ բաժի, հարկի—Հ. Բ.) կէսն ազատ է»⁶: Արձանագրությունը շարունակվում է այլ հարկի հիշատակությամբ, բայց քանի որ, ինչպես պիտի տեսնենք, ուսումնասիրողները սխալմամբ այն համարում են «շալակաւոր»-ին վերաբերող նախադասության շարունակությունը, մեջբերում ենք և այն. «Եւ ի կապճին տաին դահեկանին իջ: դրամ այս տան իջ: իւր աղատ է»:

Միանգամայն պարզ է, որ «շալակաւոր»-ն այստեղ մարդ է և Անի քաղաքի բնակիչ: Բառը մի անգամ ևս հանդիպում է Արուճում, դարձյալ վիճաբար արձանագրությունում: Այնտեղ կարդում ենք. «Յանուն Աստուծոյ ի թուական ՆԼԶ (436+551=987 թ.) ես Սմբատ Շահնշահ որդի Աշոտոյ Շահնշահի ազատեցի վասն իմ հաւրն հոգւոյն եւ իմ արեւշատութեան եւ մեղաց թողութեան զշալակաւոր բաժէ շնորհին Աստուծոյ...»⁷:

Հայոց լեզվի բառարաններում «շալակաւոր» բառը արձանագրված է, բայց որպես աղբյուր ունենալով ոչ Անիի և Արուճի արձանագրությունները: Հայկազյան լեզվի մեծ բառարանում այն չի արձանագրված: Սահակ Ամատունին ցույց է տալիս, որ բառը հանդիպում է Արարատյան գավառում և Մուշում և ունի հետևյալ նշանակությունը. «Վնա՝ որ շալակով փի բան է տանում»⁸, եվ բերում է օրինակներ. «Շունը շալակորի վրայ կը հալի: Առած. Աղբ. Հանդ., ԺԱ, 116: «Շալակաւորին բարև տուող չկայ. Առած. (Մշ.)»:

Բառին նույնպիսի բացատրություն է տալիս Ստ. Մալխասյանցը. «շալակուր-շալակը բեռ ունեցող, բեռնավորված»⁹:

Հ. Աճառյանը «շալակ» բառի տակ նշում է և «շալկուր»-ը՝ որպես «նոր բառ» (թեև, ինչպես տեսանք, հիշվում է X դարից), առանց բացատրելու իմաստը¹⁰:

⁵ Հ. Մանանդյան. Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում. Երևան, 1930, էջ 30:

⁶ Դիվան հայ վիճագրության. պրակ 1, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի. Երևան, 1966, էջ 37:

⁷ Վիճական տարեգիր, ցուցակ ժողովածո արձանագրությանց հայոց, կազմյաց Կ. Կստանյանց. Ս. Պետերբուրգ, 1913, էջ 9: Կոստանյանցը արձանագրության շարունակությունը կրճատել է: Շարունակությունն է. «Եւ եթէ որ իմ վճռիս դիմադարձ լինի նղովեսցի յԱստուծոյ, ՅԺԸ հայրապետացնա: Տե՛ս Հ. Շահխաթունյանց. Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի և հինգ գավառացն Արարատա. հ. Բ. էջմիածին, 1842, էջ 61: Հմմտ. Ղ. Ալիշան. Այրարատ, էջ 144:

⁸ Ս. Ամատունի. Հայոց բառ ու բան. Վաղարշապատ, 1912, էջ 508:

⁹ Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան. հ. Գ, Երևան, 1945, էջ 491:

¹⁰ Հ. Աճառյան. Հայերեն արձատական բառարան, հ. Գ, էջ 481:

Այսպիսով, ըստ Սահակ Ամատունու և Ստ. Մալխասյանցի շալակաւոր նշանակում է բեռ կրող, մի խոսքով բեռնակիր (համբալ)։

Ինչպէս և ն հասկացել և բացատրել Անիի արձանագրության «շալակաւոր»-ը Բազարատ Վիկացու արձանագրութեամբ զբաղված մասնագետները։ Ազգրից տանք՝ այնպես, ինչպես վիքոնիշյալ բառարանագիրները։ Այսպես Մ. Բրոսսէն բերված նախագաւառութունը Բարդամանի է. «Chaque portefaix d'Ani est exempté d'impos pour la moitié de son char» (շալակաւոր տեղիքի բեռնակիր ազատված է հարկից բամբակի կեսի շալակով)։ Հասկանալի չէ, եթէ բեռնակիր է, ապա ինչպես դարձավ բամբակի տեր, եթէ բամբակի տեր է, ինչպես դարձավ բեռնակիր։ Կարծեցյալ «բամբակի» մասին դեռ խոսք կրին։

Ամենից տարօրինակ Բարդամանութունները տվել են Մ. Էմինը և Ս. Եղիազարյանը։ Մ. Էմինը Բարդամանի է. «Аппец, носилыца хвороста, освобождается от половины подати»¹² (սցալա (խոսի) կրող անեցին ազատվում է հարկի կեսի շալակով)։ Եվ Բազարատի արձանագրության մեջ հաջորդ հարկատունն և նրա վճարած հարկին վերաբերող նախագաւառութունը կցելով «շալակաւոր»-ին վերաբերողին, շարունակում է. «Если же выюк его в ханике (всём), то он платит 9 динариев» (բայց եթէ նրա բեռը (կշռում է) մեկ խանիքս, ապա նա վճարում է 9 դինար)։

Իսկ Ս. Եղիազարյանը Բարդամանի է. «Вязанка дров, которую может носить на спине носилыца, свободна от налога. Но если вязанка больше, то носильщик уплачивает сбор привратнику города (?) 9 динарий»¹³ («Սի կապոց փայլը, որ բեռնակիրը ի վիճակի է իր շալակին կրել, ազատ է հարկից, բայց եթէ կապոցը ավելի մեծ է, ապա բեռնակիրը քաղաքի բարապանին հարկ է վճարում 9 դինար»)։

Վերջապես Բ. Ն. Բենեշիշը Բարդամանի է. «И аппец с поклажей платил за половину свободна»¹⁴ («Բամբակով բեռով անեցին տպաւորում է հարկի կեսի շալակով»)։

Արդ, արամաբանական է արդյոք ենթադրել, որ Բազարատ Վիկացին, բարձրագույն մեծագույն բանակալներից մեկի դուքս-կատապանը, Անիի, տան է Բազմաթիվ լայնության նախկին մայրաքաղաքի Մայր տաճարի պատին արձանագրելու «անեցի բեռնակիրների հարկման մասին, բողոքի առթիվով շալակաւորին», տարբերություն դնել նրա և ոչ անեցի բեռնակիր միջև։ Բեռնակիր ինչպիսի՝ եկամուտների հիման վրա պետք էր այդ հարկը դանձվել, մի՞թէ մի շալակ կամ մի քիչ ավելի ցախի կամ խոփի համար «շալակաւոր»-ը ի վիճակի էր վճարել ինն դինար (մեկ դինարը՝ մոտ 4 գրամ ոսկի, ասել է մոտ 36 գրամ ոսկի), և վերջապես, ինն դինարով հարկվող մեկ շալակ ցախը ի՞նչ պիտի արժենար։ Այնուհետև, ինչքան պատվաբեր էր Աշոտ III Ողորմածի որդուն՝ Շահնշահ Սմբատին, իր հոր հոգու փրկության և իր, Սմբատի, արեւշատության համար բեռնակիրներին հարկից ազատելու մասին հատուկ արձանագրություն թողնելը։ Դեռ ավելին. ըստ այսմ է, Բազարատ Վիկացին իր ուսերի վրա բեռը կրող բեռնակիրին

¹¹ M. Brosset. Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie exécuté en 1847—1848, I-re livraison. St.-Petersbourg, 1849, p. 95.

¹² Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, перевел Н. О. Эмин. М., 1881, с. 14.

¹³ С. А. Егнazarov. Исследования по истории армянского права. Вып. 1, Киев, 1919, с. 6, 2-й изд. էջ 39, որտեղ նա տալիս է ավելի ընդարձակ «մեկնաբանություն»։ «Носильщик, приносящий дрова в город вязанками на своей спине, а за выюк дров он уплачивал 9 динариев».

¹⁴ Б. Н. Венешевич. Три армянские надписи XI в. из эпохи византийского владычества. СПб., 1921, с. 23.

հարկի կեսից է ազատում, այն դեպքում, երբ սայլով կամ գրաստով գինի ծախողին հարկից լրիվ է ազատում. «Գինեւոր Անեցի եթէ սայլով, եթէ գրաստով բաժն ազատ է», գրում է նա իր այդ նույն արձանագրության մեջ:

«Շալակաւոր» բառը ծագում է «շալակ» բառից: Հայկական աղբյուրներում այն վկայված է մեր ազգային մատենագրության արշալույսից: «Եւ ել յանդն քաղել արիովթ. եւ եգիտ որթ յանգին, եւ քաղեաց ի նմանէ ազոխ լի շալակաւ իւրով»¹⁵: «Այն ինչ կամէր ի վերայ ալեաց ծովու սաստել վասն անօրէն հպարտութեանն, եւ զվերին լերանցն ներքին առնել եւ զներքին վերին, զնա ինքն յերկիր հողեալ շալակաւ շրջեցուցանէին»¹⁶: Առաջին դեպքում «շալակ» է թարգմանված հունարեն բնագրի ἰσαλιον-ը (շոր, հանդերձ), երկրորդ դեպքում՝ φερσιον (պատգարակ):

Ըստ Հ. Աճառյանի «շալակ»-ի ունեցած բաղում իմաստները հետևյալներն են. «մախաղ, պարկ, տոպրակ, պատգարակ, բեռ, կոնակ, թիկունք...»: Ստ. Մալխասյանցը իր հերթին բացատրում է. «Մարդու կոնակը երկու ուսերի մեջ, մինչև մեջքը, որի վրա դնում են բեռը՝ փոխադրելու համար: Բեռի ափս քանակը, որ մարդ մի անգամից կարող է տանել շալակով: Ընդհանրապես շալակով տանելու կամ շալակված ծանրոց, տոպրակ, պալուսակ և այլն: Ներկվելիք նյութերի (մանած, կտորեղեն և այլն) մի բեռ, որ շալակով տարվում է: Պատգարակ: Գրվածքի սրբագրություն կամ հավելված լուսանցքում կամ տողերի մեջ: Փոխ. պարտականություն, որ դրվում է մեկի վրա»:

Մեր համոզմամբ Բագարատ Վիկացու և Սմբատ Թագավորի արձանագրությունների «շալակաւոր»-ի մեջ «շալակ» բառի իմաստն է՝ «մախաղ, պարկ, տոպրակ»-ը և ամենևին ոչ բեռը, հետևաբար «շալակաւոր» նշանակում է մախաղ, պարկ, տոպրակ ունեցող: Բյուզանդական աղբյուրներում դրանք կոչվում են σάκος (սակիոս), փոքր σάκος-ը՝ σακκούλα (սակկուլա), σάκελλα (սակկելա) կամ σακελλα (սակկելի): Հեսիքիոս Ալեքսանդրացու (V կամ VI դար) բառարանում σακελλα (σακελιον) բառը բացատրվում է. «ὅπου τὸ χροσιον τίθεται» («որտեղ ոսկին (ոսկեդրամն) է դրվում»)¹⁷, նույն բացատրությունն է տալիս նաև պատրիարք Փոտը¹⁸: Մնդրո առարկա բառի հոմանիշ է համարվում βελαντιον-ը՝ փողի տոպրակ, քսակ, ուրեմն «շալակաւոր» նշանակում է քսակավոր: Σακκούλα-յից ստեղծվել է σακκούλάριος (սակկուլարիոս) բառը, որտեղ—ριος վերջածանցը համապատասխանում է հայերենի -աւորին: Կասկած չի կարող լինել, որ «շալակաւոր»-ը օգտագործվել է σακκούλάριος (սակկուլարիոս) իմաստով, որի և բառացի թարգմանությունն է:

Արդ, որոշակի ի՞նչ է Քաջակում σακκούλάριος: Այն հանդիպում է X դարի բյուզանդական նշանավոր «Էպարքոսի գրքում»՝ Կոստանդնուպոլսի «Քաղաքապետի գրքում», որը կանոնավորում էր մայրաքաղաքի առևտրական և արհեստավորական էորեդոչացիների աշխատանքը: Սակկուլարիոսները հիշվում են խնդրո առարկա գրքի 3-րդ գլխում, որը կրում է Περὶ τραπεζιτών («Յաղագս սեղանաւորաց»)՝¹⁹ վերնագիրը: Տվյալ գրքի § 2-ում կարդում ենք. «Լուծալափոխները (καταλλάκται) պարտավոր են հրապարակներում և փո-

¹⁵ Դ Թագաւորութեանց, Դ, 39:

¹⁶ Բ Մախաբայեցաց, Բ, 8:

¹⁷ Ἡσυχίου τοῦ Ἀλεξανδρέως Λεξικόν, Αἰλίου Διογενειανοῦ Περιεργονένητες, Φιλολογικὴ ἀποκατάστασις Mauricius Schmidt. Ἀναστατικὴ ἔκδοσις, Ἀθήναι 1975, τ. 4, σελ. 1332.

¹⁸ Φωτίου Ἀλέξανδρου συναγωγὴ, ed. S. A. Naber, T. II, 1863.

¹⁹ Հունարեն τράπεζα—սեղան, τραπεζίτης—սեղանավոր: Սեղանավոր—բանկիր, որտեղ բառը հենց սեղան է նշանակում:

դոցներում կանգնած սակկուլարիոսների մասին հայտնել [քաղաքի] էպարքուին, որպեսզի իրանք որևէ անօրինական գործունեություն չծավալեն: Եթե լուծայափոխները սակկուլարիոսների մասին տեղյակ լինելով չեն հայտնում, ապա նրանք ենթակա են վերոհիշյալ պատժին»²⁰ (այսինքն՝ ձեռքի հատման):

«էպարքոսի գրքի» հունարեն քննական բնագրի հրատարակիչ Յոհաննես Կոդերը բնագրի *σάκκουλαριος*-ը թարգմանում է *Taschenspieler*²¹, այսինքն՝ աճապար, խաբեբա, պատրիշ: Չգիտես ինչու, նրանց բացահայտելու գործը պիտի դրվեր լուծայափոխների վրա: Մ. Յա. Սյուզումովը, «էպարքոսի գրքի» ռուսերեն թարգմանիչը, բառը թողնում է առանց թարգմանության, բայց հանդամանորեն ծանոթագրում է: Անհրաժեշտ ենք համարում մեջբերել նրա ծանոթագրությունն ամբողջությամբ: Նա գրում է. «Այստեղ խոսքը վերաբերում է ոստիկանության հսկողության պարտականություններին, որոնք գրվում էին սեղանավորների կորպորացիայի վրա: Դրա հետ մեկտեղ այս հոդվածով սեղանավորներին տրվում էր իրենց մասնագիտությամբ պարապելու մենաշնորհը: Փոքր վիճելի է *σάκκουλαριος* *επιφανείων* *τῶν ἐπαρχῶν*»: Սյուզումովը շարունակում է. «Ֆ. Ուսպենսկին Կոստանդնուպոլսի էպարքոսին նվիրված իր ուսումնասիրության մեջ (Эпарх, стр. 93) այս նախադասությունը թարգմանում է. «...էպարքոսի պահանջով ներկայացնել դրամներով արկղները»: Սակայն նման թարգմանությունը զգվարանում է «*τοῦτοις εἰδότες*» («այդ մասին»²³ իմանալով») արտահայտությամբ: Այս տեքստի ըմբռնմամբ Ֆ. Ուսպենսկուն մոտ է և Ա. Ֆոգտը (Vogt, Basile I, p. 124). «...էպարքոսին տեղյակ պահել նրանց [փողի] արկղների առկայության մասին»: Շտյոկլեն ու Բոակը սակկուլարիոսներին համարում են դրամ կեղծողներ, Չեռնոուսովը՝ պետական վերահսկողությունից խուսափող լուծայափոխներ: Մեր (այսինքն՝ Սյուզումովի—Հ. Բ.) կարծիքով սակկուլարիոսը (բառացի՝ «мешочник», *σάκκος* «мешок» բառից) կորպորացիայի ոչ անդամ լուծայափոխն էր, ով «տակից» ղեակվում էր սեղանավորի գործով: Սեղանավորները շահագրգռված էին բռնել իրենց մրցակից սակկուլարիոսներին: Սակայն Բյուզանդիայում լայն տարածված կաշառակերության պայմաններում առանձին սեղանավորներ կաշառք ստանալով, մատները արանքով էին նայում սակկուլարիոսների անօրինական զբաղմունքի վրա: Իշխանությունները չէին կարող թույլ տալ էպարքոսի մրջտական վերահսկողության տակ գանգի առանց իրականացնելու այդպիսի կարևոր ֆունկցիաներ, ինչպիսիք էր դրամական շրջանառության կարգավորումը: Թույլատրել սակկուլարիոսներին գործունեությունը փաստորեն նշանակում էր թույլ տալ կեղծ դրամի շրջանառությունը, դրա համար սակկուլարիոսին թաքցնող լուծայափոխին սպառնում էր նույն պատիժը, ինչ դրամ կեղծողին»²⁴:

Մեր համոզմամբ էպարքոսի գրքի տվյալ տեղը ամենեին թույլ չի տալիս եզրակացնելու, որ սակկուլարիոսները կարող էին առնչություն ունե-

²⁰ Das Eparchenbuch Leons des Weisen. Einführung. Edition, Übersetzung und Indices von Johannes Koder. Wien, 1991. S. 88.

²¹ Նույն տեղում, էջ 89:

²² Սյուզումովի թարգմանությունը՝ «сообщать о них эпарту»:

²³ Սյուզումովը սխալ է թարգմանում. *τοῦτοις εἰδότες* չի նշանակում «знающих это», այլ «уравнь (սակկուլարիոսների) մասին տեղյակ լինելով»:

²⁴ Византийская книга эпарха. Вступительная статья, перевод, комментарий М. Я. Сюзюмова. М., 1962, с. 144—145.

նալ կեղծ դրամի շրջանառության հետ, կամ ընդհանրապես դրամ կեղծողներ լինելին, թեև բացառված չէ, որ նրանք կորպորացիայի ոչ անդամ լուծայափոխներ էին, բոլոր դեպքերում՝ լուծայափոխներ-սեղանավորներ-քուսն-կիրներ: Անհում և Բադրատունյաց Հայաստանում ընդհանրապես կառող էր և՛ սակկուլարիոս-սեղանավոր տարբերակում գոյություն չունենալ. և՛ «շալակաւոր» բառը՝ բովանդակել այդ երկու իմաստներն էլ:

Արդ, նույնացնելով «շալակաւոր»-ներին սակկուլարիոսների հետ, մենք հետո ենք այն մտքից, որ Անիր շալակաւորները նույնպես կորպորացիաներին չպատկանող լուծայափոխներ էին, թեև դա չի բացառվում, եթե պարզվի, որ Անիրում այն ժամանակ իսկապես գոյություն ունեւ սեղանավորների կորպորացիա: Ինչ էլ լինի, «շալակաւոր» նշանակում է և օգտագործված է սակկուլարիոս-սեղանավոր-բանկիր իմաստով, որ ոչ միայն իմաստով է նույնանում, այլև բառերի նմանաճշունքամբ՝ սակուլա-շալակ, սակկուլարիոս-շալակաւոր:

Վերջում բացատրենք Մ. Բրոսեի, Մ. էմինի և Ս. Նդիադարյանի կողմից խնդրո առարկա նախադասության թարգմանության սխալների պատճառը: Նախ «բամէնցավ» բառը: Ֆաբսիմիլիում պարզ կարդացվում է ԲԱՄԷՆՅԱՎ, ընդ որում առաջին «Բ» տառը հետո է ավելացված և այն արձանագրության տառերից երեք անգամ փոքր է: Փոքր լինելու պատճառը՝ անհրաժեշտ տարածության բացակայությունն է: Ամենայն հավանականությամբ այդ տառը արձանագրության փորագրությունից անմիջապես հետո է ավելացվել և փորագրողի թույլ տված սխալի ուղղում պիտի համարել: Բայց այն հրատարակիչների կողմից կարդացվել է այլ կերպ: Այսպես, Մ. Բրոսեն կարդացել է «բամբէնցավ» և ենթադրելով, որ խոսքը «բամբակին» է վերաբերում, թարգմանել է cotton-բամբակ, թեև միաժամանակ գրել է. «բամբէն» բառը ինձ համար կասկածելի է և թարգմանությունը մոտավոր է»: Ներսես Սարգիսյանը «բամբէնցավ»-ի փոխարեն կաբդացել է «ՅԱՄԷՆ ՅԱՂ», Վերջին բառը Մ. էմինը և Ս. Նդիադարյանը հասկանալով «ՅԱՆ» (փայտ) առաջինը թարգմանել է «хворост» (ցախ, խոփվ), երկրորդը, հավանաբար հաջորդող նախադասության «կապիճը» (հատեղենների շափ) հասկանալով «կապոց», թարգմանել է «вязанка дров» («մի կապոց ցախ»):

Հակառակ ամեն ինչին, «բամբէնցավ»-ի առեղծվածը դեռ իր լուսաբանողին է սպասում:

Թի քանի խոսք էլ Մ. էմինի և Ս. Նդիադարյանի ինն դիմար. հարկի մասին, որ, ըստ նրանց, «բեռնակիրը» մի խուրձ խոփվի համար վճարում էր քաղաքի բարապանին («привратнику города»): Նրանք արձանագրության ռե ի կապճին տաին (այսինքն՝ մինչ այդ տալին, տալիս էին—Հ. Բ.) դահեկանին :Զ: դրամ, այս տան :Դ: :Բ: ազատ է» նախադասության մեջ (որ նշանակում է «նրանք անցյալում մեկ կապճի համար տալիս էին մեկ դահեկան արժեքի դիմաց վեց դրամ հարկ, այժմ պիտի տան չորս, երկուսով պակաս») ՏԱԻՆ բառը կարդալով ՏԱ ԻՆ, ստացել են ինն դիմար: Հարց է ծագում, ո՞րտեղից բուսավ քաղաքի բարապանը՝ «привратник города»-ն: Հավանաբար «դահեկանը» «դեհկան» են հասկացել, թեև «դեհկան» նշանակում է «կուսակալ, դավառապետ»: Բայց քանի որ դա չէր «հարմարվում» կոնտեքստին, հարմար գտան «քաղաքի բարապան» թարգմանել...

ИЗ ПРОФЕССИИ В БАГРАТИДСКОЙ АРМЕНИИ
(шалакавор—носильщик или банкир?)

Член-корр. АНА Р. М. БАРТИҚЯՆ

Резюме

В двух армянских лапидарных надписях—царя Смбата 987 г. из Аруча и византийского правителя фемы «Армении и Иверии» Богарата Вхкаци из Ани 1060 г.—упомянута профессия «шалакавор». Данное слово, происходящее от «шалак» («спина», на которой носильщик нес поклажу), интерпретируется исследователями как «носильщик». В разных районах Армении намного позднее слово «шалакавор» употреблялось именно в этом смысле. Но дело в том, что в надписи царя Смбата речь идет о полном освобождении «шалакаворов» от уплаты налога ради спасения души его отца, царя Багратидской Армении Ашота III, а также ради его, царя Смбата, долголетия и отпущения грехов, в другой же—об освобождении анийских «шалакаворов» от уплаты полонийного налога. Очень сомнительно, чтобы Багратидский царь оставил бы специальную надпись относительно налогообложения носильщиков, а Богарат Вхкаци имел в виду налогообложение конкретно анийских носильщиков. Армянское слово «шалак» означало также «мошна» и соответствует византийскому «саккос», в который, согласно Гесихию Александрийскому и патриарху Фотию, «кладут золото» (золотые монеты). Маленький саккос назывался «саккула», от которого происходит «саккуларий», профессия, упомянутая в «Книге Константинопольского епарха», источнике X века, наряду с трапезитами (банкирами) и каталлаками (менялами). «Шалакавор» и есть «саккуларий», с которым совпадает и по значению, и по созвучию. В Византии термины трапезит, каталлакт, саккуларий, а также ростовщик, хотя и отличались по содержанию, но все связаны с деньгами. В средневековой же Армении в слове «шалакавор» могли содержаться все вышеупомянутые значения.